ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նազենի Ղարիբյան

Մարիամ Գիգոյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարի պարտականությունները կատարող

ՀՀ մշակույթի նախարարության արտաքին կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Աշխաբադ (Թուրքմենստան)

2019 թվականի մայիսի 14-17-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամ, Թուրքմենստանի մշակույթի նախարարություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների գիտական և մշակութային 14-րդ համաժողովին.

Մասնակցություն Հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամի խորհրդի նիստին:

2019 թ. մայիսի 14-ին նախարարության արտաքին կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար Մարիամ Գիգոյանի հետ մեկնեցինք Աշխաբադ՝ ԱՊՀ անդամ պետությունների գիտական և մշակութային 14-րդ համաժողովին, ինչպես նաև Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) խորհրդի միացյալ նիստին մասնակցելու նպատակով: Տարանցիկ

չվերթը Մոսկվայի միջոցով էր, որտեղ ստիպված էինք սպասել գրեթե 13 ժամ: Ս. թ. մայիսի 15-ի վաղ առավոտյան ժամանեցինք Աշխաբադ, որտեղ մեզ դիմավորեց Թուրքմենստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ն. Գ. Գառնիկ Բադալյանը:

Մեծ թվով ներկայացված հայաստանյան պատվիրակությունը, ի թիվս որոնց գրաքննադատ և թարգմանիչ Լիլիթ Մելիքսեթյանը, գրող Նորայր Սարգսյանը, արվեստաբան Ինեսա Մարգարյանը, արվեստագետ Լիլիթ Մելիքյանը, նկարիչ Անի Հովակիմյանը, ռեժիսոր Սոնա Ալեքսանյանը, մարդաբաններ Համլետ Մելքումյանը և Սաթենիկ Մկրտչյանը, արդեն սպասում էին մեզ Աշխաբադում:

Առավոտյան Հայաստանի պատվիրակության հետ միասին մասնակցեցինք Թուրքմենստանի ժողովրդական արվեստների և լուսանկարչության ցուցահաբդեսին, ինչից հետո տեղի ունեցավ ԱՊՀ անդամ պետությունների գիտական և մշակութային 14-րդ համաժողովի պաշտոնական բացումը, որտեղ ես ընդգրկված էի ֆորումի նախագահական կազմում:

Որպես պատվիրակության ղեկավար հանդես եկա կարճ խոսքով՝ կարևորելով համագործակցությունը Թուրքմենստանի և ԱՊՀ անդամ պետությունների հետ, հատկապես ԱՊՀ գրքի տարվա շրջանակներում գրականության և թարգմանչական գործի խթանման համատեքստում: Անդրադարձա նաև ֆորումի երկրորդ թեմային՝ Մետաքսի ճանապարհին՝ հիշատակելով Հայաստանի կարևորագույն դերը Արևելք-Արևմուտք մշակութային տարանցային ուղիների զարգացման գործում:

Պլենար նիստին շնորհվեցին «Համագործակցության աստղեր» մրցանակները: Հայաստանից հաղթող էր ճանաչվել ՀՀ ժողովրդական նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանը, ով, ցավոք, ներկա չէր միջոցառմանը: Նրա մրցանակը կուղարկվի դիվանագիտական կապուղիներով:

Բացումից հետո տեղի ունեցավ նախագահության անդամների մամլո ասուլիս, որտեղ ես հարցազրույց տվեցի Թուրքմենստանի մի շարք հեռուստաընկերությունների

լրագրողներին՝ պատմելով ֆորումի կարևորության և Աշխաբադից ստացած տպավորությունների մասին:

Երեկոյան ֆորումի մասնակիցների հետ միասին ներկա գտնվեցինք «Դուտարի մեղեդին» թատերական ներկայացմանը, որին հաջորդեց պաշտոնական ընթրիքը:

Հաջորդ օրը՝ մայիսի 16-ին, հայկական պատվիրակությունը մասնակցեց համաժողովին: Քննարկվելիք թեմաներն էին՝ «Համագործակցության մշակույթը՝ երկխոսության եզակի լեզու», «Կրթությունն ու գիտությունը ԱՊՀ-ում՝ համագործակցության նոր ուղղություններ» և «2019 թվականը ԱՊՀ գրքի տարի»: Վերջինիս մոդերատորը Լիլիթ Մելքումյանն էր:

Հայկական պատվիրակությունն ակտիվ մասնակցեց քննարկումներին և հանդես եկավ նոր նախագծերի առաջարկներով, մասնավորապես՝ Մետաքսի ճանապարհի խորագրի ներքո ավանդական և ժամանակակից տարազների միջազգային ցուցահանդես-փառատոն կազմակերպելու ծրագրով, որը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց մասնակիցների կողմից:

Համաժողովից հետո պատվիրակությունը մասնակցեց «Նվիրիր գիրք» ակցիային, որի շրջանակներում ԱՊՀ անդամ պետությունները գրքեր նվիրաբերեցին Թուրքմենստանի պետական մշակութային կենտրոնի պետական գրադարանին:

Զուգահեռաբար ես և Մարիամ Գիգոյանը այցելեցինք Թուրքմենստանի գյուղատնտեսության ձեռքբերումների ցուցահանդես, ինչից հետո մասնակցեցինք ՀՀՄՀ խորհրդի միացյալ նիստին: Նիստին որոշում կայացվեց 2020 թ. հայտարարել Հայրենական մեծ պատերազմին նվիրված տարի, 2021-ը՝ ճարտարապետության, 2022-ը՝ ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ավանդույթների, իսկ 2023-ը՝ ռուսաց լեզուն որպես ազգամիջյան հաղորդակցության միջոցի:

Քվեարկությամբ հաստատվեց ՀՀՄՀ 2020 թ. միջոցառումների ցանկը, որոնցից երեքը պետք է իրականցնի Հայաստանի Հանրապետությունը՝ Վանաձորում կայանալիք «Համագործակցության և բարեկամության ներկապնակ» միջազգային

նկարչական փառատոնը, Երևանում կայանալիք «Հիշողության կերպարանքներ» 10-րդ միջազգային գիտագործնական սեմինարը, ինչպես նաև Երևանում և Դիլիջանում կայանալիք «Արխիվները որպես սերնդների հիշողություններ» խորագրով համաժողովը:

Նիստից հետո պատվիրակության հետ միասին այցելեցինք Թուրքմենստանում ՀՀ դեսպանատուն՝ ծանոթանալու դեսպանության աշխատանքներին և քննարկելու Թուրքմենստանում հայկական մշակույթի օրերի կազմակերպման հարցերը:

Երեկոյան տեղի ունեցավ ԱՊՀ անդամ պետությունների գիտական և մշակութային 14-րդ համաժողովի պաշտոնական փակման արարողությունը, որից հետո պատվիրակության հետ ներկա գտնվեցինք ԱՊՀ երիտասարդ սիմֆոնիկ նվագախմբի համերգին:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների գիտական և մշակութային 14-րդ համաժողովին.
2. Մասնակցություն Հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամի խորհրդի նիստին.
3. Միջազգային հարթակում Հայաստանի պաշտոնական ներկայացում.
4. Թուրքմենստանի հետ մշակութային կապերի խթանում.
5. ԱՊՀ անդամ պետությունների հետ մշակությաին կապերի խթանում.
6. Մասնագիտական և գործընկերային կապերի ստեղծում:

20.05.2019 թ.

Նազենի Ղարիբյան

X _____